



ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԺԱՌԱՆԳԱԴՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՑԱՐԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՑԹՆԵՐ

Դպրեվանքի 1976-1977 ուսումնական տարեշրջամբ պաշտօնապէս բաց-
ուեցաւ Ս. Աթոռիս Գահակալ Ն. Ամեմ. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրստերեանի
կողմէ 14 Սեպտեմբեր 1976ին, Ալեքս և Մարի Մանուկեան ժառանգաւորաց մե-
րակառոյց շէնքին մէջ: Ամբողջ մէկ ամիս կազմակերպչական աշխատանքները
յառաջ տարուեցան, որոնցմէ վերջ միայն կարելի եղաւ սկսիլ մշակութային—
կրօնական—գեղարուեստական երեկոյքներու շարքը Դպրեվանքէն մերս, ըստ
մշակուած որոշ ծրագրի մը:

Ա. Երաժշտական ունկնդրութիւն

Շաբաթ, 16 Հոկտ. 1976, երեկոյեան ժամը 6.30-8 տեղի ունեցաւ դա-
սական երաժշտութեան ունկնդրութիւն:

Ղեկավարն էր եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ Պրն. Սահակ
Գալսեան, որ նախքան ունկնդրութիւնը ծանօթութիւններ տուաւ Պէթհովէ-
նի մասին և ներկայացուց նոյն երաժիշտի լաւագոյն գործերէն՝ Վեցերորդ
(«Հովուերգական») Համանուագը: Ապա կատարուեցաւ Համանուագին ուն-
կնդրութիւնը մայնսպնակի վրայ:

Բ. Սրբոց Թարգմանչաց յիշատակին մուիքուած հաւաքոյք

Շաբաթ, 23 Հոկտ. 1976, երեկոյեան ժամը 6.30-8, տեղի ունեցաւ հա-
ւաքոյք մը, նուիրուած Ս. Թարգմանչաց յիշատակին: Ժառանգաւորաց Վար.
Ժարանի քայլերդին միախումբ երգեցողութենէն ետք, Փոխ-Տեսուչ Հոգւ. Տ.
Գեղարդ Արդ. Տաւուտլարեան բացումը կատարեց երեկոյթին և վարեց յայտա-
գիրը: Օրուան խորհուրդին շուրջ բանախօսեց կրթական Տեսուչ Պրն. Արայ
Գալսեան, որ մասնաւորաբար շեշտեց հայերէն լեզուի անաղարտ պահպան-
ման և գործածութեան անհրաժեշտութիւնը: Գործադրուեցաւ գեղարուեստա-
կան յաջող յայտագիր մը, որուն ընթացքին կատարուեցան շարականներու մե-
ներգներ և խմբային երգեր, ինչպէս նաև ընթերցումներ Յովիչ Արքեպս. Գուր-
եանէ և Արչակ Զօպանեանէ:

Իմաստասիր և յորդորական խօսքերով երեկոյթը փակեց Դպրեվանքի
Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Անէմեան, որ եկեղեցասիրութեան և
հայրենասիրութեան սքանչելի օրինակներ բերաւ, որոնց ակնառու եղած էր
սրբալոյս Միւռոնի օրհնութեան առթիւ Հայաստան իր այցելութեան ընթաց-
քին:

Հանդէսը վերջացաւ Ս. Հօր «Պահպանիչ»-ով և միախումբ երգուած
«Հայր մեր»-ով:

Գ. Տօն Գիտ Խաչի

Քաչի գիտի տօնը Հանդիսաւորապէս նշուեցաւ Շաբաթ, 6 Նոյեմբեր 1976, Հանդիսութեան մը ընթացքին, զոր բացաւ և յայտագիրը վարեց Դպրեւանքի գասախօսներէն Պրն. Յարութիւն Սամուէլեան:

Գործադրուեցաւ ղեղարուեստական կողիկ և լաւ կազմակերպուած յայտագիր մը՝ բաղկացած ընթերցումներէ և շարականներէ: Քաչի գիտի նշանակութեան և խաչի գաղափարին շուրջ խօսեցաւ Փոխ-Տեսուչ Հոգ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտյարեան, իսկ կրօնական խորունկ մթնոլորտ ստեղծած սոյն ղեղեցիկ հաւաքոյթը փակեց Վերատեսուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս Աճէմեան:

Ուսանողները ցրուեցան Գերշ. Սրբազան Հօր «Պահպանիչ»-էն և համախումբ երգուած «Հայր մեր»-էն ետք:

Դ. Դասական երաժշտութեան երեկոյ

Դասական երաժշտութեան ունկնդրութեան, ծանօթացման և դնահատման համար հայտատուեցան մասնաւոր հաւաքոյթներ, որոնցմէ առաջինը տեղի ունեցաւ Շաբաթ երեկոյ, 13 Նոյեմբեր 1976ին:

Այս առաջին ունկնդրութիւնը նուիրուած էր Ծօրէնի, որուն կեանքին և գործերուն մասին մանրամասն տեղեկութիւններ տուաւ Պրն. Արայ Գալայճեան: Իսկ Ծօրէնի երկերէն նմուշներ դաշնակի վրայ նուագեց երաժշտութեան ուսուցիչ Պրն. Վահէ Գալայճեան:

Ե. Հարց-պատասխանի երեկոյ

Ուսանողութեան ընդհանուր զարգացման համար պարբերաբար պիտի կազմակերպուին հարց-պատասխանի և վիճարանութեան հաւաքոյթներ: Առաջինը տեղի ունեցաւ Շաբաթ երեկոյ, 20 Նոյեմբեր 1976ին:

Հաւաքոյթը վարեց Ընդհ. Ազգաց պատմութեան ուսուցիչ Պրն. Աբրահամ Սիւրբիւբեան, որ յաջողեցաւ ուսանողներու հետաքրքրութիւնը լարուած պահել երեկոյթի ամբողջ տևողութեան: Իրենց պատասխաններուն ճշգրտութեամբ առաջին հանդիսացան և նուէր ստացան Բարեշ. Սահակ Սրկ. Աղգաշեան և Տրց. Ենովք Պաշայեան:

Զ. Փապաւեմի ցուցադրութիւն

Ամիսը անդամ մը ուսանողութեան՝ կը ցուցադրուին դաստիարակչական ծագւածներ՝ ղիտական, ղեղարուեստական, բնութեան վերաբերեալ և կամ այլ նիւթերու շուրջ:

Նման երրորդ ցուցադրութիւնը կատարուեցաւ Շաբաթ երեկոյ, 27 Նոյեմբեր 1976ին, ղեկավարութեամբ Պրն. Յարութիւն Սամուէլեանի: